ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

16 մայիսի 2012թ. թիվ 171

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. մայիսի 3-ի թիվ 547-Ն որոշման 5-րդ կետի պահանջների, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 11.05.2012թ. թիվ 01/14.12/2420-12 գրությունը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. “Վանաձորի բժշկական կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության գույքի կազմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով 7503600 դրամ հաշվեկշռային արժեքով Վանաձոր քաղաքի Պ. Սևակի 49 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկը՝ 531,42 քառ. մետր ընդհանուր մակերեսով (այսուհետ՝ գույք) առանձնացնելու և որպես պետական սեփականություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ մեկամսյա ժամկետում ապահովել հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ս.Հովհաննիսյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. մայիսի 16
ք.Վանաձոր